

Ընթացիկ հաշվետվություն

ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի 2015թ.-ի մարտ-հունիս ամիսների

2015թ.-ի մարտ-հունիս ամիսների ընթացքում ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի կողմից, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Աջակցել կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը բնապահպանական հարցերի լուծման գործընթացներում» ծրագրի շրջանակներում և տեխնիկական պահանջներին համապատասխան իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Ուսումնասիրություններ են տարվել ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և շահագործման ոլորտում ընդերքօգտագործման բնապահպանական բաղադրիչների և էկոլոգիական խնդիրների շրջանակների մշակման, նոր հանքավայրերի հայտնաբերման ու շահագործման տրամադրման հարցերի, ինչպես նաև լեռնահանքային արդյունաբերությունից որպես <ժառանգություն> պետությանը թողնված խնդիրների լուծման ուղիների մշակման ուղղությամբ: Այս նպատակով իրականացվել է մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող լեռնահանքային ձեռնարկությունների տեղեկատվության հավաքագրում և խնդիրների նշված շրջանակներում ձեռնարկությունների աշխատանքի բարելավման հնարավորությունների որոշմանը նպաստող վերլուծությունների կատարում:

2015թ. մայիսի 26-ին կենտրոնը ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նիստերի դահլիճում, նշված թեմայի շրջանակներում, կազմակերպել էր կլոր սեղան «ՀՀ մետաղական հանքավայրերի արդյունահանման հետ կապված առանցքային հարցերը» թեմայով: Միջոցառմանը ներկա էին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներկայացուցիչները, «Կայուն զարգացման կենտրոնի», «Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոնի» փորձագետները, Օրիուս կենտրոնի ներկայացուցիչները ինչպես նաև ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ֆակուլտետի ուսանողները:

Կլոր սեղանին զեկուցումներով հանդես եկան կենտրոնի ղեկավար Ռ. Մովսեսյանը և փորձագետներ Մ. Գրիգորյանն ու Շ. Խաչատրյանը: Հանդիպմանը առնացքային

հարցերի շուրջ ելույթով հանդես եկավ նաև PLERF կենտրոնի գիտաշխատող Վ. Խաչատրյանը:

Քննարկման առաջին հարցը նվիրված էր ՀՀ տնտեսության մեջ հանքարդյունաբերության դերին և նշանակությանը, որի մաս գեկուցեց ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, կենտրոնի փորձագետ Մարատ Գրիգորյանը: Նա ներկայացրեց վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ-ում իրականացված հանքարդյունաբերական աշխատանքների հիմնական բնութագիրը, ինչպես նաև բերեց համեմատականներ սովետական տարիներին հանքավայրի շահագործման տնտեսական ցուցանիշների միջև և այս առումով առկա են մի շարք բացթողումներ, որոնք կարիք են զգում հետագա առավել խորը ուսումնասիրությունների և գնահատման:

ՀՀ մետաղական հանքավայրերի արդյունահանման հետ կապված առանցքային հարցերի շուրջ խոսեց կենտրոնի փորձագետ, ԵՊՀ ռեզիդնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնի վարիչ, երկր.-հանք. գիտ. թեկ. Շահեն Խաչատրյանը: Բանախոսն իր զեկույցում անդրադարձավ լեռնահանքային արդյունաբերական համալիրների աշխատանքների հաշվետվողականությանն ու դրանց որակին, կիրառվող տեխնոլոգիական գործընթացների արդիականությանը, հանքավայրերի արդյունահանման և հանքաքարերի հարստացման գործընթացների վերահսկողությանը, լիցենզիաների տրամադրմանը, աշխատանքային նախագծերին, պաշարների շարժի իրականացմանն ու պոչանքային տնտեսություններին: Նա հատկապես հատուկ ընդգծեց լեռնահանքային արդյունաբերական համալիրների մասնագիտական վերազինման հարցը, շատ ընկերություններ այսօր չունեն համապատասխան մասնագիտացված ծառայություններ՝ լեռնաերկրաբանական, մակշեղերական և այլն: Եղած մասնագետներն էլ անպայման պետք է անցնեն վերապատրաստումներ և ատեստավորվեն: Հաջորդ խնդիրը վերաբերվում է լաբորատորիաներին, վերջիններս չեն անցնում համապատասխան լիցենզավորում և նրանց կողմից արված նմուշների անալիզները չեն կարող հավաստի լինել:

Կենտրոնի դեկավար, փորձագետ Ռ. Մովսեսյանը հատկապես ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հարցին, որ ներկայումս ոլորտի աշխատանքները կարգավորող հրահանգների մեծ մասը համապատասխան որոշումներով ուժը կորցրած

են ճանաչվել, իսկ նորերն էլ դեռևս մշակված և կյանքի կոչված չեն, ինչը չափազանց մեծ դժվարություններ են ստեղծում արդյունահանող ձեռնարկությունների գործունեության վերահսկողության կազմակերպման համար:

Կլոր սեղանի ժամանակ եղան հարց ու պատասխանները, որոնք վերաբերվում էին ինչպես բուն քննարկվող թեմաններին, այնպես էլ դրանց հետ սերտորեն կապված մի շարք այլ հարցերի:

Ռ. Մովսեսյանն նշեց, որ քննարկման արդյունքում առաջ քաշված հարցերը հիմք կհանդիսանան կենտրոնի կողմից կատարվող ծրագրի շրջանակներում աշխատանքների հետագա ուղղությունների հստակեցման և նշված հարցերի վրա առավել մեծ ուշադրության անդրադարձման համար:

2. Ուսումնասիրությունների երկրորդ բնագավառն ընդգրկել է ՀՀ ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման հարցերին: Այս կապակցությամբ ընթացիկ ժամանակահատվածում կատարվել է ՀՀ-ում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և որակի պահպանման վերաբերյալ նյութերի հավաքագրում ու դասակարգում, որոնց արդյունքները քննարկվել են կենտրոնի փոձագետների հանդիպման ընթացքում:

Նշված խնդրի շրջանակներում էր նաև ՀՀ տարածքում ջրահոսքերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-րի նպատակահարմարության և դրանց գործունեության հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրների վերհանումը: Վերջինիս շուրջ կենտրոնում հունիսի 29-ին անցկացված սեմինարի ընթացքում փորձագետ Ս. Քելյանի կողմից ներկայացվեցին նշված խնդրի առանցքային հարցերը՝ ջրօգտագործման հարկերի բացակայություն, շահագործում նախագծային լուրջ շեղումներով, գետերի էկոհամակարգերի կործանում, ՀԷԿ-րի կառուցումը հատուկ պահպանվող տարածքներում և այս ամենի հետևանքով առաջացող բազմաթիվ սոցիալ-տնտեսական, էկոլոգիական, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության գործոնների ձևավոնում: Սեմինարի ընթացքում ներկայացվեցին նաև ոլորտի խնդիրների կարգավորմանն ուղղված առաջարկություններ, որոնք վերաբերվում էին ՓՀԷԿ-րի հզորությանը, էկոլոգիական թողքին, մշտադիտարկումների ավտոմատացմանը և լիցենզավորմանը, ինչպես նաև ոլորտի գործունեության թափանցիկությանը:

3. Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի փորձագետ Ա. Մարգարովի կողմից իրականացվել է ՀՀ-ում և տարածաշրջանում կայուն զարգացման խնդրի վերաբերյալ

տեղեկատվության հավաքագրում, համակարգում ու վերլուծություն, ինչպես նաև սկզբունքների ու գերակայությունների քննարկում:

Ծրագիրն իրականացվում է ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի անմիջական աջակցությամբ:

ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի
ղեկավար՝

Ռ.Ս. Մովսեսյան

30.06.2015